



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:  
Առանձին համարները 7 կոպեկով:  
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:  
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis. Rédaction «Mschak».  
Տ է Լ Է Փ օ ն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն):  
Յայտատարութիւնը ընդունում է ամեն լեզուով:  
Յայտարարութիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 կոպեկի:  
Տ է Լ Է Փ օ ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ի Ր Գ Ի Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Աննա Կարապետեան, Եկատերինա Թովմասեան Սպանիացիներին, սրտի ցաւով յայտնելով առաջինը իր որդու և երկրորդը իր տաղը՝ անանարոյժ

Մ Ի Թ Ա Ր Օ Հ Ա Ն Զ Ա Ն Ե Ա Ն Ս Պ Ա Ն Գ Ա Ր Ե Ա Ն Յ Ի

մայր, ինքուրմ են ծանօթներին, բարեկամներին և հանդուցեալի պաշտօնակիցներին հորձ բերել հոգեհանգստին, որ տեղի կունենայ այս սեպտեմբեր ամսի 23-ին, երեկոյեան 5 ժամին, Թիֆլիսի Միքայելեան հիւանդանոցի մատուռում: Թաղման օրի մասին կը յայտարարվի առանձին:

### ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Հեռագրորեն.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կատարանական դաժնիքը, Բանտերի անողջապահական վիճակը Կատարաններում: Մատենագրութիւն. Կատարանի կրթական վիճակը: Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւնները. Կատարանի յօդուածը. Տնտեսական ճգնաժամ. Կրեւէ և Անգլիա. Կատարանի կատարանից. Արտաքին լուրեր.—ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ.—Հեռ.Ա.Գ.Ի.ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՒՎԱՆ. Պոստ ըմ կաթ:

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

(Պոստը գործակալութեան)

Կ. Պօլիս, 26 սեպտեմբեր: Միջառնների արտակարգ խորհրդի մէջ ընկնում էր արտասահման գաղթի հայերի կարեւորների յարգունիս գրաւելու հարցը: Մինչև որ այդ հարցի լուծումը կը կայանայ, հայերին պատկանող սեփականութեան ցուցակագրութիւնը դադարեցրած է:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍԱՆԱԿԱՆ ԴԱՀԻՃԻՑ

Մենք հարողջեցինք, որ սեպտեմբերի 23-ին սկսվեց Թիֆլիսի նահանգական դատարանում Թիֆլիսի քաղաքային կրկնօրյան ընկերութեան մէջ կատարված գեղծումների գործի ընթացիկը: Ասպետները 24-ին և 25-ին դատարանը դադարեցրեցին միայն վիճակի հարցաքննութեամբ: Ասպետները 26-ին, հինգշաբթի, սկսվեցին երկուս, այն է մեղադրական և պաշտպանողական կողմերի վիճարանութիւնները: Պրոկուրորի օգնական Կրասովսկի, իր մեղադրական ճառը ըսակեց առաւօտեան ժամը 9-ին և վերջացրեց

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

«ՊՈՒՏ-ԸՄ ԿԱՐԹ»

Այնքան սկիզբն էր, մի պարզ, լուսնակայ դիշեր: Սուրբապետի գաւառում տարվայ այդ ժամանակ գիշերները բաւական ցուրտ է լինում: Ի՞նչու չէ գիւղացին ասում. «Աստուածածինն ի՞նչը բախը, Սուրբ Խաչն արա, մախր ծակը»:

Բ... գիւղում այնքան ցուրտ էր արդէն, որ դրսում ընած մի մարդ էլ չը կար: Նեղ, ծուռ ու մուռ փողոցներում երկնակութիւնը դադարել էր: Այս ու այն դրան մօտ, կտորի վրա, դէզերի ծայրին գամիւնները գլուխն ու մուտքը անազնի թաթերի վրա դրած՝ չնթռկել, նստել էին, սպասելով կասկածաւոր ստուերի կամ ուշացած անցորդականի, որ վրա վազեն: Արթուն էին և բուստաններին և դուռ չը բացած այգիների պարսպանները, որոնք իրանց ողորմելի չարախնները վրա կուշ եկած, չսած աչքերով աշխատում էին որոշել մի հեռաւոր կասկածելի առարկայ, որ գողի նմանութիւն ունենար: Երբեմն նրանք, իրանց ներկայութիւնը և զգաստութիւնը ամեն մի առարկային ցոյց տալու համար, կամ զօւցէ և վախից, «այ-հո-յ» էին կանչում: Եւ ամեն անգամ, երբ դաշտից գալիս էր այդ ձայնը, գիւղի չնեղը հաչոց ու ուռնոց

մօտ 11-ին: Կա սնդեց այն ամբաստանութիւնների վրա, որոնք առաջ են բերված մեղադրական ակտի մէջ, այն դասազանութեամբ, որ հրաժարվեց Ամիրադովին մեղադրելուց Սերկուտովի և Հախնադարովի գործերի մէջ կատարված կեղծիքների համար: Մնացած բոլոր կէտերի վերաբերմամբ նա պահանջեց մեղաւոր ճանաչել Ամատունուն և Ամիրադովին:

Իշխան Ամատունու պաշտպան երդուեալ հաստատարար Տէր-Ստեփանով ինչորեք կատարելապէս արդարացնել իր կրկնումին, հիմնվելով այն փաստերի վրա, որ եթէ եղել են կեղծումներ, դրանց մէջ մեղաւոր է ամբողջ վարչութիւնը և ոչ միայն Ամատունին, իսկ Ամիրադովի պաշտպան Օպօչինին, հերքելով Ամիրադովի յանցաւորութիւնը որ և է կեղծիքի մէջ, խօստովանեց, որ նա մեղաւոր է միայն փող վատնելու համար, և այդ վատնումը հետեանը է միայն թեթեւաբանութեան, և ինչորեք դատարանից գործադրել Ամիրադովի վերաբերմամբ Բարձրագոյն մանիֆէստը և ազատել նրան պատմից:

Վերջին խօսքը արվեց իշխան Ամատունուն, որ սնդեց իր կատարելապէս անմեղութեան վրա, իսկ Ամիրադով չը կամեցաւ օգտվել վերջին պաշտպանութեան խօսքը արտասանելու իրաւունքից: Երեկ երեկոյեան, ժամի 6-ին, Թիֆլիսի նահանգական դատարանը, իշխան Կապուչին Ամատունու և Նիկոլայ Ամիրադովի գործի վերաբերմամբ հետեալ վճիռը կայացրեց. Իշխան Կապուչին Ամատունուն զրկել բոլոր իրաւունքներից և ուղարկել ընկալութեան համար Տօբոլսկի նահանգը, տալով իրաւունք արքայի տեղը հասնելուց 12 ամի յետոյ ընտրել ընկալութեան տեղ Ներսիսյանի և Արիսկան Բուսաստանում, բացի մայրաքաղաքներից և նրանց նահանգներից:

Երբ բարձրագոյնում էր ապա, մի կարճ միջոցից յետոյ, դարձեալ համատարած լուծութիւնն էր տիրում:

Այն գիշերը մօտ էր, օդն աւելի և աւելի ցրտանում էր:

Այդ ժամին արթուն էր միայն մի ընտանիք, 3 հոգուց բաղկացած: Կրանք Բ... գիւղացի չէին, այլ գաղթականներ, որոնք նոյն օրն էին հասել այդ կողմերը: Իսկապէս, գաղթական անուններ էլ չէր կարելի: Գաղթական սակումը հասկանում ենք մի այնպիսի վիճակ, երբ հեռուից եկողներն ունեն գոնէ մի պարկ, մի վերմակ, մի փաշա, հագած են գոնէ մի պատառոտած վերարկու, ծակոտած տրեխներ: Բայց օրանք բոլորովին զուրկ էին այս ամենից: Սրանք մեղի էին, այս բառի բուն նշանակութեամբ, եթէ զգեստ չը համարենք չորերի այն ծուլները, որոնք կախկախված էին նրանց վտիտ մարմինների վրա, անկարող լինելով ծածկել նրանց մեղիութիւնը: Գուք տեսել էք գայլի բերանից զօռով խլած գառը. առանց դեմակի, հիւանդ, արեւնոտ և կիսամեռ... Այդպէս էին այդ գաղթականները, գերեզմաններից դուրս քաչած գիւղացի, և ոչ կենդանի մարդիկ:

Նրանց ընկալարանն է մի մարդիկ՝ ծուռ, ուղորված պատերով, որոնցից մէկը փլվել է, թող տարվի որ լուսնի լոյսը ներս թափանցէ: Բորբոնած դարձանը, որ կրած էր խոնաւ պատերին, մի անախտի ճառ էր տարածել, փլված պատերի կողմը գերանները քաշ էին ընկել և

րից, իսկ Նիկոլայ Ամիրադովին ենթարկել 4 ամսակայ քանտարկութեան:

### ԲԱՆՈՐԵՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՎԱՆ ՎԻՃԱԿԸ ՆԱԻԹԱՀԱՆՔԵՐՈՒՄ

Վերջերս կառավարութիւնը կովկասեան նախարան հանրերի բժշկական և առողջապահական դրութիւնը ուսումնասիրելու համար մի շարք տեղեկութիւններ պահանջեց հանքատէրերից: Փոքր ի շատ ծանօթ լինելով նախարան հանքերի բանտերի առողջապահական վիճակի հետ, մենք, առանց մի բոլոր տասնամեկու, կարող ենք ասել, որ ստանալով իր պահանջած տեղեկութիւնները, կառավարութիւնը վերին աստիճանի վատ դադար պիտի կազմի մեր հանքատէրերի մարդկային զգացմունքների մասին: Զարմանալի չէ արդեօք, անխնայ կերպով օգտվել մարդկանց աշխատանքով, նրանց դառն ջրօրերով առաջին հարատւութիւններ զիջել և չը մտածել գոնէ այդ խեղճերի առողջապահական վիճակը բարելաւելու մասին: Այդ աւելի բան պակասակալի է: Մենք չենք կարծում, որ մեր հանքատէրերի խիղճը և զգացմունքները այն աստիճանի ճարացած լինեն, որ նրանք մի բոլոր, մի վայրկեան չը կարողանան պատկերացնել իրանց առաջ բանտերի խիղճական դրութիւնը, որովհետեւ նրանք ևս մարդիկ են՝ մարդկային զգացմունքներով:

Մի բոլոր երեկակայեցէք ձեզ կանգնած նախարան հանքում, ուր կհանրը ետում է, ուր բանտերը, կեղտի մէջ թաղված, նախում շարժակալ, ջրօրերը երեսից թափելով վազում է ղէպի իր գործը: Նա այդ բոլորն չէ մտածում իր դրութեան մասին, այլ անձնուէր կերպով աշխատում է, որ տիրող գործը, յանձնարարութիւնը բարեխղճութեամբ կատարի, որ նրա պատճառով հանքի որ և է մասի գործում դանդաղութիւն չառաջանայ: Նա օրեկան աշխատում է 12 ժամ, յոգնած և դադրած վերադառնում է իր ընկալարանը: Ինչ է արդեօք սպասում նրան այդ ընկալարանում: Յաւալի է խոստովանել, որ բացի կեղտից և մութից—ոչինչ: Նա այդ բոլորին ստիպված է մտածել իր հա-

մար կերակուր պատրաստելու մասին: Մինչև կերակուր պատրաստել և ուտելը աշխատելու ժամը մտնում է և նա շատ անգամ ստիպված է լինում, առանց հանգստանալու, նորից աշխատելու գնալ: Այդպիսի պայմաններում ինչ գործ և ինչ աշխատանք կարելի է պահանջել այդ յոգնած ու դադրած մարդկանցից: Շատ բընական է, որ ինչքան էլ նա աշխատի իր վրա դրած պարտականութիւնները բարեխղճութեամբ կատարել, այնու ամենայնիւ, անկարելի է այդ և թերութիւններ կը լինեն:

Բաւական է մի անգույն քայլ և տեղի է ունենում զժողովը դէպքը. նայում էք և տեսնում, որ կամ նրա ձեռքն է վրասով, կամ ոտը, կամ մարմնի մի ուրիշ մասը, կամ մի մահացու վէրք է ստացել: Կեռ բաւական չեն նրա ֆիզիկական տանջանքները, շատ անգամ կը տեսնէք, որ այդպիսի բոլորներում այդ այնպիսի կամ բանտերին նոյն իսկ սկսում են հայտնել:

Բանտերի մի մասը հանգստութիւնը գերադասում է առը կերակուրից: Այդպիսի պարագաներում նա ստիպված է կերակուրել միմիայն հացով: Ֆիզիկական աշխատանքը պահանջում է լաւ սնունդ, իսկ մեր բանտերը զրկված է անընդարար կերակուրից: Նախ հանքում կերակուր չեն պատրաստում, իսկ ուրիշ տեղից ստանալու միջոց չունի թանգութեան պատճառով: Եթէ ինքն է պատրաստում՝ զրկում է հանգստութեան բոլորներից: Այդ հանգամանքը բանտերի մէջ առաջ է բերում մի տեսակ ուժասպառութիւն և ֆիզիկական թուլութիւն, որոնք ցանկալի չեն նոյն իսկ հանքատէրերի շահի տեսակէտից: Եւ այդ հանգամանքին ենք վերադառնում այն, որ հանքային բանտերի մեծ մասը ղեկնած և գոնատված են ու ֆիզիկական ոչ այնքան առողջ: Գուցէ շատերն այդ հանգամանքը վերադրեն հանքային օդին, որ ստորված է զանազան ճնշող գաղթելով, սակայն մենք կարծում ենք, որ այդ երկրորդական պայմաններից մէկը կարող է լինել:

Վերջ իշխած առողջապահական անյարմարութիւնները պատկանում են այն շարքի անյարմարութիւններին, որոնց շատ հեշտութեամբ կարելի է հեռացնել, առանց որ և է մեծ ծախ-

բախտ ծնողի համար, որ նրա կեանքը փրկելու համար ստիպված է եղել իբրև մի անգին բեռ վերցնել նրան իր ուտելի վրա և փոխել հարկաւոր վերատեր, ձորեր կտրել, լեռներ բարձրանալ, ահաւոր այրերում գիշերել: Այսպէս էր այդ փոքրիկը Բ... գիւղը հասել:

Գիշերվայ սառն հովը վրած պատի բացուածքից առատ հոտանքով փչում է ղէպի այս մարդի ներքը: Յուրտ է, մրսում են խեղճերը: Մայրը աշխատում է իր հագի ծուլներում ծածկել հիւանդ և մեղի մանուկի վտիտ մարմինը, երեխ, նա էլ մրսում է, գուցէ կարելի լինի դըրանով տաքացնել նրա հեռագետէտ սառնող արիւնը... Բայց ի՞նչու. ծուլները իբրև վրա չը հաւաքվեցան, և խեղճը յուսահատված, ամբողջ մարմնով կուսացաւ երեսայի վրա, յուսալով բամու առաջն այսպիսով փակել: Հայրը, որ մինչև այդ ժամանակ ապուշ կարած աչքերով զիտում էր այդ բոլորը, յանկարծ ուշքի եկաւ, հանեց իր վրայից միակ գոլորված արտաւոր և զցեց երեխայի վրա, իսկ ինքը մնաց համարեա մեղի, որովհետև կեղտոտ չորի այն կտորը, որը որպէս թէ նրա շապիկն էր, ծածկում էր խեղճի միայն մէջքը, բայց թողնելով մազոտ կործնի ու թեւերը: Իսկ երբ քամին շարժում էր մէջքի այդ չորը, այն ժամանակ թշուառ ամբողջապէս մերկանում էր: Անասանան վիշտը բթացրել էր մրսելու զղացողութիւնը:

Լուռ էին:

—Մարէ, պոստ ըմ կաթ, յանկարծ գոչեց երե-

սերի: Հարկաւոր է միմիայն ընտանեկանները չի-  
նելիս ի նկատի ունենալ մի քանի առողջապա-  
հական պայմաններ: Հանրում պէտք է ունենալ  
ստանայ տար կերակուր և ուժեղ ստանայիս կը  
վճարի ճաշի փողը: Խրաքանչիւր բանտորին կե-  
րակրելը ամենապարզ կարգից միմիայն 6—7  
բուրլի ամսական: Այդ դուրմարը ուրախութեամբ  
նա կը վճարի, ինչպէս մեզ յայտնի է էփանա-  
զին ճաշարանի գոյութեան ժամանակից: Այդ-  
պէս, ազատելով բանտորին ճաշ պատրաստելու  
մասին մտածելուց, դուք տալիս էք նրան հանգս-  
տանալու ժամանակ, և աշխատելու մէջ տես-  
նում էք նրան բոլորովին թարմ ու յոյսով: Բաշ-  
նիւններ և վանաններ ունենալը նոյնքան կարե-  
ւոր են, որքան և ճաշարանը: Բանտորն այժմ  
զործից վերադառնալուց յետոյ, ստիպված է մի  
կերպ լուսացվել և ապա վերադառնալ իր բնա-  
կարանը, իսկ եթէ բազմիմանք լինեն, նա մա-  
քուր կը լուսացվի, իր հագուստը կը փոխի, կը  
ճաշի և ապա կը հանգստանայ: Որքան արդեօք  
նա գոհ կը լինի իր վիճակից, ապրելով այդպի-  
սի պարագաներում: Բազմիմանք և վանաններ  
ունենալու յարմարութիւն ունեն բոլոր հանրա-  
տէրերը, որովհետեւ հանրում գիշեր և ցերեկ  
չորդի կաթմաններում տար ջուր ունեն, այնպէս  
որ ջուր տաքացնելու համար նոր ծախսերի  
հարկաւորութիւն չը կայ: Իսկ ինչ վերաբերում  
է հանրերում բազմիս պահելու միւս ծախսերին,  
նրանք այնքան չնչին են, որ ինչպատեղի անգամ  
չարժէ: Վերջապէս, հարկաւոր է ընտանեկաններ  
մաքրութեան վրա առանձին ուղարկութիւն  
դարձնել: Կրա համար, կարծում ենք, յատկա-  
պէս մի մարդ կարելի է վարձել 15—16 բուր-  
լով, որն այդ վարձով ուրախութեամբ անը  
մաքրողի պաշտօնը կը կատարէր: Չեւնարկելով  
այդ միջոցներին, կարծում ենք, որ հեռացրած  
կը լինեն թէ կեղտոտութիւնները և թէ յաճա-  
խակի հիւանդութեան դէպքերը: Իսկ դրա փո-  
խարէն հանրատուները կը ստանան բանտորի բա-  
րեխիզ ծառայութիւնը:

Կրկնում ենք, որ այդ յարմարութիւնները  
մեծ ծախսեր չեն պահանջում, — ամենաշատը  
տարեկան 1500—2500 բուրլ: Բայց միթէ այդ  
գումարը կարող է որ և է ազդեցութիւն ունե-  
նալ հանրատուները առեւտրական բալանսի վրա:  
Չենք կարծում:

Մենք հաւատացած ենք, որ լեւոնային վար-  
չութիւնը, իր ստացած տեղեկութիւնները քննե-  
լուց յետոյ, կը ձեռնարկի հանրերի բանտորնե-  
րի առողջապահական դրութիւնը բարելաւելու  
միջոցներին: Բայց ինչն ամեն այնտեղ հասցնել,  
որ մեզ ստիպեն անելու, քանի որ մենք ինքներս  
ակնյայտնի կերպով հասկանում ենք այդ պահանջ-  
ների իրաւացի լինելը և միջոց ունենք անելու:

Յ. Մարգարեան

ՄԱՍԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Առաքել ֆոն Բոլորի» — թարգ. Գարբիէլ արքեպիս-  
կոսոս Ալվազեան: Վաղարշապատ, 1896.

Էջմիածնի տպարանը կարող է պարծենալ, որ  
գոնէ մի անգամ լոյս է հանել ժողովրդի ըն-  
թեղանութեան համար յարմար մի գիրք: Ա-  
մենքին յայտնի է թէ որքան գեղեցիկ կերպով  
աշղոյզվել է Գարբիէլ արքեպիսկոսոսին հայաց-  
նել Կրիւովի առակները: Կրեւ ուղարկուող  
թարգմանիչ, հանդուգեալը հիւսել է գաւառա-  
ցիկ լեզու, որի մէջ պարունակվում է այնքան  
հուճար և կենդանութիւն: Թարգմանութիւնը  
յանձնարարականների կարօտ չէ: Գալով հրա-  
տարակութեան, կասեմք, որ տպագրութիւնը լա-  
ն է: Գիրքը շատ չարաւոր է. — 80 կողմէլ՝ մօտ 470  
երեսների համար: Բայց և այդպէս, այդ գործը  
ժողովրդական հրատարակութիւն անունակ չէ  
կարելի, պէտք էր աւելի էփան գին նշանակել,  
իսկ դրա համար կարելի էր գիրքը չը ստուա-  
րացնել, եթէ, ի հարկէ, էջմիածնի տպարանը  
ունենար փոքրագիր գրքեր հրատարակելու բո-  
լոր յարմարութիւնները: Պակասութիւն է և այն,  
որ պատկերներ չը կան զրբի մէջ, մինչդեռ  
պատկերներ գտնելը դժուարութիւն չէր: Որքան  
իշխում ենք, առակների առաջին հրատարակու-  
թիւնը, որ եղել է Կ. Պոլսում, պատկերներ  
ունէր:

Էջմիածնի նորութիւնը այդ գրքի մէջ Ալվա-  
զեան արքեպիսկոսոսի կենսագրութիւնն է: Եւ-  
նորհակալ կը լինէինք, եթէ այդ յօդուածի հե-  
ղինակ Ն. Գարամեան միայն հաղորդէր փաս-  
տեր, ազատելով ընթերցողին իր դատողութիւն-  
ներից ու տեսութիւններից, որոնց հակառակու-  
համար նախ և առաջ հարկաւոր կը լինէր մի  
պարզ լեզու: Չարմանալին այն է, որ այդ պա-  
րունը դեռ թոյլ է տալիս իրան շարժմանս  
դատողութիւններ անել այդ յօդուածի մէջ աշ-  
խարհաբար լեզուի մաքրութեան և կանոնաւո-  
րութեան մասին: — Էջմիածինը չէ կարող գրել  
Գարբիէլ արքեպիսկոսոսի կենսագրութիւնը,  
դրա համար նա պիտի բաց անէր իր հալածանք-  
ների ակտիւ յիշատակարանները և նրանցով  
ինքն իրան ծեծէր: Եթէ էջմիածինը երախտա-  
գիտութեան որ և է զգացմունք ունի դէպի  
հանդուգեալը, թող գտնէ նրա ձեռագրիները,  
որոնք կարելի են «Բանագրանից», ինչպէս ա-  
սում է Կ. Գարամեան: Զարչակապետ հո-  
գին երբեք չէ հեռացել էջմիածնի պատերից,  
միթէ միակ Ալվազեանի գրուածքներն են կո-  
րել... Գոնէ պիտի փակելու և պահելու շնորհ  
լինէր էջմիածնում...

Լ.

ՆԱՄՍԿ ԿՐԱՍՆՈՎՈՎՈՒԹԻՒՆ

Սեպտեմբերի 17-ին

Ուղուն-Աղա նաւահանգիստը տեղափոխվում է  
այստեղ և մինչև հոկտեմբերի 15-ը Ուղուն-Ա-  
ղան փակված կը լինի: Կրասնովոզուկը, կենդա-  
նութիւն ստանալով, այժմ կատարեալ երջան-  
կութեան մէջ է: Կարծես թէ քարերն էլ չունչ  
են առել: Որ փողոցով անցնում են՝ տեսնում  
են նոր տներ և կառուցվում, նոր խանութներ  
են բացվում: Վերջիններիս թիւը եռասուսուկի  
է: Ամեն մարդ, լսելով մի ինչ որ նոր եռացման  
ձայնը, գլուխ է բարձրացնում և շտապում է  
խանութ բանալ: Ու՛մ համար են նրանք բաց-  
վում, ու՛մ վրա են մտադիր ապրանքները վա-  
ճառել, այդ մասին չեն էլ մտածում վաճառա-  
կանները, այլ միմեանց ստանալով անելով, սըր-  
տատորի սպասում են Ուղուն-Աղային, յուսալով  
տարվալ ընթացքում հազարներ դարձել:

Երկաթուղային գիծը չուտով կաւարովի և  
երկեկեկութիւնը կը սկսի հոկտեմբերի 15-ից:  
Գիծը, սկիզբն առնելով այստեղից, գնում է  
դէպի Բուխարա և Սամարկանդ: Այստեղի նաւա-  
հանգիստը, երկաթուղու հնորհիւ, մեծ դեր կը  
խաղալ թէ Պարսկաստանի և թէ Անդրկասպեան  
երկրի համար առևտրի տեսակետից:

Կ. Յ.

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԻՆ

«Մշակի» այս համարը բաղկացած է թերթ ու  
կէսից:

Կովկասի կառավարչապետի դիւանատունը,  
հիմնվելով ներքին գործերի մինիստրութեան  
դիւանատան հրամանի վրա, շրջաբերական ու-  
ղարկեց Կովկասի բոլոր նահանգապետներին,  
պատահելով պահանջել իրանց նահանգներում  
գոյութիւն ունեցող բոլոր բարեգործական ըն-  
կերութիւններից մանրամասն հաշիւ, սկսած  
1892 թւից մինչև ներկայ 1896 թւի սկիզբը:  
Այդ առիթով մեզ հաղորդում են, որ հայոց  
Բարեգործական ընկերութեան թէ լորհուրդը և  
թէ բոլոր 18 հիւղերի տեղական վարչութիւննե-  
րը պատէր են ստացել նահանգապետներից՝  
ներկայացնել իւրաքանչիւր հիւղի հաշիւը 1892,  
93, 94 և 95 թվականների համար, առանձին  
առանձին, որքան կարելի է մանրամասն, այն է՝  
բացատրել թէ քանի գործադիր անգամ է ունեցել  
հիւղը ամեն տարի, ովքեր են եղել այդ անգամները,  
ինչ կազմակերպութիւն է ունեցել վարչութիւնը  
և ինչ միջոցներ է ձեռք առել ընկերութեան  
նպատակների իրագործման համար: Ընկերու-  
թեան լորհուրդը, իր կողմից մշակելով մի ա-  
ռանձին մանրամասն ծրագիր, որի համեմատ  
պէտք է ներկայացնեն հաշիւները, շրջաբերակա-

նով հրամանագրել է բոլոր հիւղերին՝ ներկա-  
յացնել պահանջված հաշիւները:

«Кавказ» լրագիրը հաղորդում է, որ Կով-  
կասի կառավարչապետ զենեբով-աղիտանտ Շե-  
րեմետևի հիւանդութեան լուրը ուղարկած լուր  
է: Կառավարչապետը, արտասահմանից վերա-  
դառնալով Մոսկվա, հիւանդացել էր թոքերի  
բորբոքումով, բայց այժմ հիւանդութիւնը անցել  
է և սկսել է առողջանալ: Հոկտեմբերի կէսին  
հաւանորէն կառավարչապետը կը վերադառնայ  
Թիֆլիս:

Այս օրերս հրատարակված պետական ելե-  
մուտքի նախագիծը 1897 թւի համար, ցույց է  
տալիս, որ առաջիկայ տարին, ժողովրդական լու-  
սատարութեան գործի համար յատկացրված է  
26,501,341 բուրլի, ուրմին 1,638,280 բ. աւելի  
քան այս տարի, որ ունեցել է 24,863,061  
բուրլի: Եւստերի այդպիսի մի աննշան յաւե-  
նում ժողովրդական լուսատարութեան գործի  
համար առիթ է տուել «С. Петерб. Вѣд.» լրա-  
գրին վիճակագրական փաստերով ցույց տալ, որ  
պետական ամբողջ բերդեղան միայն 1/63 մասն է  
գործադրվում ժողովրդական լուսատարութեան  
գործի վրա և 26 միլիոնը շատ աննշան է կայս-  
րութեան տարածութեան և ազգաբնակչութեան  
թիւի նկատմամբ:

Կովկասեան կառավարչապետի օգնական կոմս  
Տատիչևի Թիֆլիս քաղաքի միջոցով ժողովրդա-  
գրութեան քաղաքային մասնաժողովի նախագահ  
է նշանակել Թիֆլիսի ոստիկանապետ Մատից-  
կուն: Միջոցով ժողովրդագրութիւնը, ինչպէս  
յայտնի է, կայանալու է 1897 թւի յունվարի  
28-ին:

Մեզ հաղորդում են Ուրմիայից, որ Շիկակ  
կոչված աւազակաբարոյ ջերդերը վերջերս կո-  
ղտուել են Մար-Բիչո և իլադեր մեծ և բազմա-  
մարդ ասօրի գիւղերը, չը խնայելով նոյն իսկ  
իլադերի հին վանքը, որ մինչև անգամ քերդե-  
րի համար էլ նուիրական ուխտատեղի է: Լուր  
է տարածված, որ ասօրի եպիսկոպոսի և նրա  
ընկերների սպանութեան դէպքը քննելու հա-  
մար, մօտերս մի ուսումնասիրական մասնաժողով  
պէտք է գալ Ուրմի:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Պե-  
տերբուրգի հայ ուսանողութիւնը մտադիր է այս  
ձեռք սովորական հայկական երեկոյ չը սարքել,  
անյարմար և տարազէպ համարելով այժմ: Բայց  
սրովհետեւ այդ երեկոների նպատակն է հայթա-  
թել չբաւոր ուսանողներին ուսման վճարի հա-  
մար անհրաժեշտ դուրսը, ուստի ուսանողու-  
թիւնը յոյս ունի, որ Պետերբուրգի հայ գաղ-

խան, լայն բանալով աչքերը, որոնք կրկին փակ-  
վեցին:

Մարդ ու կին իրար երես նայեցին ակամայ և  
երկուսի աչքերն էլ լցվեցան արտասուքով:

— Եւսման մարդ, — ասաց կինը, — էլի էսա տան  
դուռ դարկի, խայ քրիստոնեայ են, պուտ-ըմ  
կաթ ուղիւր, ասա խիւճտի իրմար ի, մի թորդ  
իմ ճիժ թամարդու մեռնի:

— Վախ վախ կնիկ, ես ինչը էնիմ, ես դոր  
էրթամ, կէս գիշեր ի, դըմմէն քնուկ են, ընձի  
վնջ դուռ կը բանայ:

Կրկին տիրեց լուռութիւն, միայն ճըպուտը պա-  
տի ճեղքերից ծղրտացնում էր, և մտկը մի ինչ  
որ խոռոչում կրծում էր իր պաշարը մի անա-  
խորժ խոռոց հանկուղ: Իսկ մրսեցնող քամին  
փչում էր ու փչում, թեթեւ սրւղոց առաջացնե-  
լով առատապիղի կախկախված եղէգներին և սար-  
դի ոտայնների մէջ:

— Պուտ-ըմ կաթ, նորից կանչեց երեխան, կըր-  
կին բաց արաւ աչքերը, մի վայրկեան յառեց  
մօր երեսին և էլի փակեց:

Մի անգամ էլ մարդ ու կնիկ արտասուտից  
աչքերով միմեանց նայեցին: Մարդն այս ան-  
գամ ոչինչ չասաց, չորացած ձեռքերով սրբեց  
չայտերի վրա կախված արտասուքի երկու խո-  
չոր կաթիլները, «վախ վախ» կանչեց, վերկա-  
ցաւ տեղից, վերցրեց պատի մօտ դրած իր մա-  
հակը, իր միակ զէնքը, վերցրեց և այն խեցա-  
տը, որ ծառայում էր նրանց իրեն ջուր խմելու  
աման: Այդպէս նա դուրս թռաւ մարագի վրած  
պատից: Նա գլխաբաց էր:

Ուր դնալ: Լուսինը իր պար ճառագայթներով  
ողողել էր ամբողջ գիւղը: Բայց կայ մէկը, որ  
նրան հակառակ: Մի րօպէ նա մոռացաւ թէ ին-  
չու է այդտեղ կանգնած: Վերադառնալ այս աշխար-  
հից, տարված այնտեղ, ուր նրա տունն էր, նրա  
արտերը: Տեսաւ նա իր պատիկ Մարտին, կար-  
մրաթուշ Նազօին... Կրանց դիակները մնացին  
այնտեղ...

— Պուտ-ըմ կաթ, կրկին հնչեց նրա ակամային:  
Նա ցնցվեց, պէտք էր կաթ ձարել: Նա չարժ-  
վեց դէպի առաջին տունը, ուր ասրում էր մի  
պատաւ այրի կին: Նա կանգ առաւ դրան մօտ,  
մտածում էր՝ արդեօք խիթ թէ ոչ: Իսկ եթէ  
դուրս գան, հայնչայնքներով ձանապարհ դնեն  
իրան... Չէ՛ որ նա մի տպւր դարիք է:

— Պուտ-ըմ կաթ...  
Այս ձայնը նրա ակամային մէջ է: Կա նրա ե-  
րեխայի օրնատական վերջին ցանկութիւնն է:  
Նա մոռացաւ երկիւղ, ամօթ: Մահակը նրա ձեռ-  
քում բարձրացաւ և մի անգղին հարուստով ի-  
ջաւ դրան վրա: Գուռը անաւոր գորդոց հանեց,  
և չներկ ընդհանուր հայոց բարձրացաւ: Կար-  
ձեալ հարուստ, կրկին ձեռնոց: Վերջապէս, բա-  
կում յայտնվեց պատաւը:

— Ո՛վ է, ձայն տուեց նա:  
— Ես եմ, մարդ, — պատասխան եղաւ դրանց, —  
խայ քրիստոնեայ եմ, գաղթական... դուք բնաց:  
Պատաւը բաց արեց դուռը, և տեսնելով գլխա-  
բաց ու մերկ մարդուն դրանը կանգնած, սար-  
տախեց ու զարհուրելի ճիւղ արձակելով, փախաւ  
տուն, դուռը ետևից փակելով:

Նոր միայն խեղճ մարդը նկատեց իր մերկու-  
թիւնը, իր սարսափելի տեսքը: Նրա մարմնով  
մի սարսուռ անցաւ, միթէ այժմ ցուրտն ազ-  
դեց: Մի կարծ ժամանակ նա մնաց բարացած  
կանգնած, բայց յանկարծ ուշքի եկաւ, և վախե-  
նալով որ մի գուցէ աղմուկի վրա մարդիկ հա-  
ւաքվեն և իրան գողի տեղ ընդունեն, խեղճը  
սկսեց փակել դէպի մի ուրիշ կողմ: Սոսկալի  
էր նրա դրութիւնը: Քամին ծածանում էր նրա  
թիկունքի վրա ընկած չորի կտորը և զիզացած  
մաղբը, չորս կողմից վրա յարձակվեցին չնրը  
և չրջապատեցին նրան: Խեղճը հաղիւ էր կարո-  
ղանում ժամակով պաշտպանել իր մերկ մար-  
մինը կատարի գաղաններից: Մէջքը դէմ տալով  
մի պատի, նա կանգ առաւ և, շարունակելով  
պաշտպանվել չնրերից, առանց այլ ևս երկար  
մտածելու, ծեծեց մի դուռ: Մի տղամարդ դուրս  
եկաւ, բաց արեց դուռը:

— Եւսման ակալէր, քեզի մեռնիմ, խայ քրիս-  
տոնեայ եմ, էն երկրի մարդ եմ, էրէխայ մը  
ունիմ, հոգեարքի մէջ է, պուտ-ըմ կաթ կուղի-  
մէկ ձար արա քո էրէխու սաղաղէն: Ասում ար-  
րուն... Խեթու ետար իրքը խարիբ օչխար թաս-  
լիմ արի իմ չօքընին, մըկայ իմ ճիժ պուտ-ըմ  
կաթ ուղելով կը մեռնի:

Աղաչանքը սրտաշարժ էր, տեսարանը յուզիչ:  
Գիւղային բերեց կաթը, ածեց նրա խեցափի  
մէջ և ձանապարհ դրեց:

Նա շտապեց դէպի մարագը, աչքի լոյսի պէս  
տանկելով այն չնչին հեղուկը, որ այնքան դժուար  
ութեամբ էր ձեռք բերել: Նա առաջ էր սլա-

նում, գործ դնելով իր թուլացած ոտները վեր-  
ջին օյժը: Բայց դեռ տեղ չէր հասել, երբ մի  
սրտամորմոք ձայն լսեց գիւղերային լուռութեան մէջ:  
— Եւսման լաւ, եւսման լաւ...  
Նա ցնցվեց ամբողջ մարմնով: Այլ ևս կա-  
կած չը կար որ թշուառութիւնը սարսափելի հա-  
րուածը իջեցրել էր... Նա աւելի արագացրեց իր  
քայլերը, և անա մարագի դրանն է...  
— Եւսման լաւ, եւսման լաւ, գուշում էր կինը՝  
մաղբը փետելով:  
Նրա գրկում պառկած էր յաւիտենական խա-  
ղաղ քնով այն փոքրիկ արարածը, որ այնքան  
քիչ ապրեց այս անիրաւ աշխարհում, բայց այն-  
քան շատ տեսաւ, շատ խեց, շատ տանջվեց:  
Թշուառ հայրը կանգ առաւ մարագի դրանը,  
անհուն, անսահման վշտով նայեց չարաբախտ  
կնոջը և մեռած երեխային: Չեւքը դողաց, խե-  
ցատը վայր ընկաւ ձեռքից և սպիտակ հեղուկը  
թափվեց խոնաւ բորբոսնած յատակի վրա: Նա  
զէն չարտեց իր մահակը, ընկաւ անհնչացած  
գիւղի վրա և մի այնպիսի աղաղակ արձակեց,  
որից ամենասարսուռ մարդն անգամ կը դողար:  
Կուտակված զայրոյթի և յուսահատութեան պու-  
թըկումն էր դա, որ որոտագին դուրս թռաւ  
վշտով լի կրծքից:  
Իսկ լուսինը շարունակում էր պայծառ փայլել  
և լուսաւորել թշուառութեան այդ դաւալներին:  
Ինչքը չէ նա լուսաւորել...  
Ա. Անարնեան

Թականութիւնը այս անգամ էլ չի զլանայ իր օգնութիւնը չքաւոր ուսանողներին:

«Вираж. Вѣд.» լրագրի մէջ, ոմն Վէրէբիսէլի, մի նամակ տպելով, կոչում է անում ուսուսարարական մարդասիրական զգացումներին և հրահրում է օգնութեան ձեռք մեկնել վրաստանի այն մասի ազգաբնակչութեան, որ անագին յետաներ է կրել հեղեղներէ: Վէրէբիսէլի հարցնում է. մի՞թէ ուսուսարարութիւնը, որ օգնեց նոյն իսկ հարէններին, չի օգնի իր դաւանակից եղբայրներին: Այդ ատիկով «Вираж. Вѣд.» իր զարմանքն է յայտնում, որ տեղական հաստատութիւնները, տեղական կովկասի մամուլը լրագրութեան են պահպանում այդպիսի մի հանրային աղէտի մասին, մինչդեռ նրանց բարոյական պարտաւորութիւնն էր կոչում անել հասարակական բարեգործութեան և կազմակերպել օգնութեան գործը: Երբի լրագրը մոռացել է, կամ չը գիտէ, որ հեղեղներէջ լիսակամներին օգնելու համար զեռ անցեալ տարիներից մի յատուկ մասնաժողով էր կազմակերպւած, և ծանօթ չէ նրա գործունէութեան հետ: Իսկ տեղական մամուլը իր ժամանակին կատարել է իր պարտքը և եթէ պէտք է ցաւել, այդ միայն այն անտարբերութեան համար, որով մայրաքաղաքի ուսուսարարական վերաբերւից կովկասի մամուլի հրաւերին և ատիկ չը տուց ուսուսարարական օգնել կովկասի ազգաբնակչութեան:

ԳՐԱԳՐՈՒՄ մեզ գրում են. «Բարեգործական ընկերութեան այստեղի մեր ճիւղը չէ կամենում կենդանութեան որ և է նշույլ ցոյց տալ: Տարիների ընթացքում նա իրան նշանաբան է ընտրել—անչարժութիւն և մեղեւորութիւն: Եւ ինչ գործունէութիւն կարելի է պահանջել մի ընկերութեան վարչութիւնից, որի նախագահը, ապրելով թիֆլիսում, տարեկան մի կամ երկու անգամ է գալիս Գորի, իսկ փոխնախագահ քահանան միայն իր գործերով է զբաղւած:

ՏՐԱՊԵՉՈՒՄ մեզ գրում են. «Անցեալ օրերս Պոլսէն երկու օսմանեան նաւ իրենց հետ բերին 500 քարոված հայաստանցիներ, որոնք կը դրկուին իրենց տեղերը. վերջին օրերս ալ 1000 հոգի եկան:»

ԻԳՎԻՒԻՅ մեզ գրում են. «Երէկ, սեպտեմբերի 22-ին, վանի ուսաց հիւպատոս Մայիվուկո հետ, նրա հակառակեան ներքոյ, իզդիր հասան ժամ 400 վանեցիներ, բոլորը գրեթէ աղամարդիկ: Ինչպէս պատմում են, սեպտեմբերի 10-ից սկսած վանում նոր խառնակութիւններ են եղել:»

ՇՈՒԱՎԵՐԻՅ մեզ գրում են. «Ամսիս 22-ին, առաւօտեան ժամի 5-ին, այստեղ, զինվածաւանդի խանութի առաջ, խանչալով սպանվեց Շուկալերի բնակիչ Խէչօ Կատարեանց, 25 տարեկան, թողնելով այրի մօրը և չորս երեխաներին: Սպանողն է չուլակիցի արչակ Բադիրեանց:

ՇՈՒՇՈՒՅ մեզ հարգում են. «Երբորդ փոխառութեան վիճակահանութեան ժամանակ 200 հազար ռուբլի գումարը տարել է Գիշի գիւղացի պատանի Յովհաննէս Քամալեան, որ խոստանում է մի քանի խոշոր բարեգործութիւններ անել:»

ԱՐԱՍՈՒՄԱՆԻՅ մեզ գրում են. «Անցեալ տարիներից այստեղ բացվել է պետական երկաթուղի զարկոց՝ Գեօրգիվիկայից անուսով, սակայն այս տարի զեռ ուսումը չէ սկսվել, որովհետև զարկոցը չունի սեփական շինութիւն և ոչ էլ վարձաված է զեռ բնակարան:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մշակի» անցեալ համարում մենք առաջ բերինք Լիվերպոլի միտինգում Գլադստոնի արտասանած ճառից մի կտոր: Ահա այդ ճառի շարունակութիւնը: «Թիւրքերը ասում են, թէ հայերի կոտորածը, ոչ թէ սուլթանի և նրա գործակալների, այլ հայ յեղափոխականների գործն

է: Գրան մենք պէտք է պատասխանենք, թէ մենք դատողութիւն ենք կազմում զէպքերի մասին ոչ թէ յեղափոխականների և ազիտատորների հաշիւներին նայելով, այլ պաշտօնական անձանց հարողով տեղեկութիւններով: Արդէն առաջին անգամ չէ, որ «Թիւրքերը» կատարվում են գաղանկութիւններ ոչ թէ մասնական ֆաստիկոսների ձեռքով, այլ թիւրքաց ստիկանութեան զորմամբ: Այդպէս էլ եղաւ 1876 թիւին: Այն ժամանակ էլ թիւրքաց կառավարութիւնը հերքում էր գաղանկութիւնների փաստը և ամեն բան զցում էր բողբաջական ազիտատորների և յեղափոխականների վրա: Այժմ այլ ևս ոչ ոք չէ կասկածում, որ բողբաջական գաղանկութիւնները պատմութեան սեպտականութիւն են դարձել, որ նրանց հերքել անկարելի է: Այժմ նոյնպէս թիւրքաց կառավարութիւնը անամօթ կերպով հերքում է կոտորածների փաստը: Եւ այդ պէտք է շարունակվի, որքան հաճօ կը լինի Եւրոպային: «Հայկական գաղանկութիւնները իրանց սարսափներով գերազանցեցին բողբաջականին: Այդքիչ է. սուլթանը, խրախուսված իր յաղթութեամբ եւրոպական միացած դիվանատիպի վրա, այդ սարսափների տեսարանը փոխադրեց դաւաճներից իր սեփական մայրաքաղաքը, թէ և Կ. Պոլսի կոտորածները գաւառական կոտորածների միայն գոհնատ ստուերն էին: Սուլթանը կարծես թէ ցանկացաւ աւելի մօտ ծանօթացնել եւրոպացիներին իր գործակալների բարբարոսութեան հետ:»

«Թիւրքաց իշխանութիւնները առաջվայ պէս Կ. Պոլսի արեւհեղութիւնների ամբողջ մեղքը զցում են հայ դաւադիրների վրա: Այդ նպատակով լրագրիներում յաճախ յօդուածներ են տըսվում, որոնք զրգում են ազգաբնակչութիւնը հայերի դէմ: «Temps» լրագրի թղթակիցը ուշադրութիւն է դարձնում Ֆիլիպպոպոլի ազգեցիկ լրագրիներից մէկի վրա, որը նորերս հրատարակեց մի յօդուած, որով հաւատացնում էր, թէ Օսմանեան բանակի վրա յարձակումը սարքել էր նրա զինվոր սըր Էզգար Վինտնա: Այն ինչ ասում է «Temps» լրագրի թղթակիցը, — այն բոլոր եւրոպական լրագրիները, որոնք պախարակում են թիւրքաց իշխանութիւնների վարմունքը, արգելւած են Կ. Պոլսում:

«Wossiche Zeitung» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հարողում է, որ հայ դաւադիրների մօտ գտնված ուսման գրքերը, անկասկած, նպատակ ունեն դայրոյթ առաջ բերել ազգաբնակչութեան մէջ հայերի դէմ, որը սկսել էր խաղաղվել թիւրքաց մայրաքաղաքում տեղի ունեցած արեւահեղ տեսարաններից յետոյ: Թղթակիցի խօսքով, իշխանութիւնները դիտաւորութիւն ունեն շուտով մի ուրիշ ցուցահանդէս կազմել, այն է ի ցոյց դնել ծայրվելու համար այն զգեստները, որ իբր թէ գտել են կայանաւորված հայերի մօտ, օրինակ, զինուորական համադրեաններ, սօֆտաների զգեստներ և այլն:

Հակառակ «Matin» լրագրի հարողում լուրի, «Temps» լրագրը կիտապաշտօնական մի նկատողութեան մէջ ասում է, որ Ֆրանսիական զեպան կամքն չէ սպառնացել սուլթանին եւրոպական պետութիւնների միջամտութեամբ, այլ յիշեցրել է սուլթանին հայերին խոստացված ընթացիկները: Գետապանը խորհուրդ էր տալիս սուլթանին որքան կարելի է շուտով իրագործել այդ խոստումները, կատարելապէս հիմը ունենալով կարծելու, որ եթէ սուլթանը կատարի իր խոստումները, խառնակութիւնները իրանք իրանց կը գաղաբեն:

«Nord» լրագիրը ասում է, որ մեծ պետութիւնները կառավարիկն Բ. Գրան ընթացիկների մի նախագիծ:

Բերլինից «Новости» լրագրին հեռագրում են, որ Կ. Պոլսի գերմանական զեպանին հրահանգներ են ուղարկված, որոնց հիման վրա նա պէտք է պաշտպանի ընթացիկների ծրագրերը:

«Economist» ապացուցում է, որ ընթացիկները կը պահպանեն Թիւրքիան քայքայումից:

Վիէնայից «Новости» լրագրին հեռագրում

են, որ «Թիւրքերը» արգելւած են բոլոր իտալական լրագրիները:

«Nord» լրագիրն ասում է, որ թիւրքական գործերի մասին մեծ պետութիւնների զեպանների բանակցութիւնները շուտով կաւարվեն և վերջնականապէս կը մշակվի ընդհանուր ընթացիկների նախագիծը թիւրքաց բոլոր նահանգների համար: Կ. Պոլսի զեպանները միտան կը ներկայացնեն իրանց նախագիծը Բ. Գրան:

Սուլթանը Գրումկովփաշայի ձեռքով մի նամակ ուղարկեց Վիէնայի կայսրին որպէս պատասխան և նորհակալութիւն այդ վերջինի ուղարկած ընտանեկան պատկերի համար: Կ. Պոլսից ճանապարհ ընկնելուց առաջ Գրումկովփաշա անկնդրութեան ընդունվեց սուլթանի մօտ, որ տեղեց շատ երկար: Հեղինակաւոր աղբյուրից հարողում են, որ վերջինի նամակի մէջ սուլթանը մասնաւոր այնուամ է այն բանի վրա, որ նորերս տեղի ունեցած տխուր անցքերը ամենին կրօնական ֆանատիկութեան հետեանք չէին: Այս սուլթանը կայսրին աղնի խօսք է տալիս, որ քրիստոնեաների կեանքին այժմ ոչ մի վտանգ չէ սպառնում և սպաքայումն էլ չի սպառնայ և թէ ինքն սրանից յետոյ հովանաւորութիւն կը ցոյց տայ քրիստոնեայ ազգաբնակչութեան, եթէ ի հարկէ, քրիստոնեաները չեն սկսի անիշխանական փորձեր անել:

«Politiche Correspondenz» լրագիրը հարողում է, թէ յոյս կայ, որ գործերի գրութիւնը կը բարեւոյթի Թիւրքիայում: Վեկավարող շրջանները, ըստ երեւոյթի, վճռել են ամեն միջոց գործ դնել մտքերը հանդուստանելու համար: Եւրոպիայի նախագահութեամբ կազմված յանձնաժողովը ազատութիւն տուեց արդէն 580 հայերի: Ետ լաւ տպաւորութիւն թողեց նոյնպէս միջազգային յանձնաժողովի կազմակերպումը՝ նորերս տեղի ունեցած կոտորածի պատճառները ըննելու համար:

Ռուսաստանի և Անգլիայի մէջ համաձայնութիւն կայացնելու հարցին մի երկար նամակ է նուիրված Լօնդոնից, որ տպված է Վիէնայի կիտապաշտօնական «Politiche Correspondenz» լրագրում. «Թէպէտ ուսաց կայսրի այցելութիւնը Բալթիկում զուտ ընտանեկան բնաւորութիւն ունի, այնու ամենայնիւ Լօնդոնի դիպլոմատիական շրջաններում կարծում են, որ այդ այցելութիւնը կարող է ազդել քաղաքականութեան ընթացիկ վրա առհասարակ և մասնաւոր թիւրքաց ճգնաժամի վրա: Չնայած պարտաւորութիւններ կամ վերջնական բացատրութիւններ մարկիզ Սոլբերիի հետ, ճիշդ է, չեն սպառնում: Միտի յոյսը, որ տածում են այստեղի զեպանները շրջաններում, այն է, որ շատ կարելի է կազմել ներկայացնել Բալթիկում համադրեալապացոյցներ, թէ քրիստոնեական ձգտումներ անկողն են Արեւելում և ցրել այն կասկածը, որով, ըստ երեւոյթի, վերաբերվում է այդ ճգնաժամներին ուսաց դիպլոմատիան: Այդ կողմից մասնաւոր մեծ յոյսեր են դնում Ռէլիի իշխանի վրա, որը միշտ մեծ համակրութիւն է վայելում ուսաց պալատում: Յոյս ունեն, որ Ռէլիի իշխանին, չորհուրդ նրա անձնական կապերի, կազմելի վերականգնել այն կապը, որ մի ժամանակ ուղում էր կապել Անգլիայի և Ռուսաստանի մէջ լորդ Բոքլեթի և որը յետոյ կարվեց:»

Կ. Պոլսից հեռագրում են, որ թիւրքաց «Իգլա» պաշտօնական լրագրում մի յօդուած տըսվեց, որի մէջ քննվում է իրերի դրութիւնը Կ. Պոլսում: Յօդուածի մէջ ասված է, որ Ֆրանսիան և Ռուսաստանը վճռել են status quo պաշտպանել Արեւելում: Աւարո-Ունգարիան ամենին չէ ցանկանում, որ խաղաղութիւնը խախտվի Արեւելում, իսկ ինչ վերաբերում է Գերմանիային՝ Վիէնայի կայսրի ուղարկած պատկերը երկու պետութիւնների մէջ եղած բարեկամական յարաբերութիւնների ամենալաւ ապացոյցն է:

Կ. Պոլսից մեզ գրում են. «Կառավարութիւնը հրատարակել կուսայ միշտ թէ անդորրութիւնը վերահաստատված է. — հարկու անդորրութիւնը՝ զօր կը պահեն տանեակ հազարաւոր զինեալ զօրքեր, հետեակ և ձիաւոր, ժանդարմներ, փո

լիսներ, խաֆէլներ: Մարդիկ փողոցներուն մէջ, մայրերուն վրա կերկին ստուերներու պէս ու անխօս, անշուկ կը սահին կերթան արագ-արագ, տխրութիւնը, մտահոգութիւնը և չուարածութիւնը առհասարակ ամէն դէպքերէ կը կաթկը թին:»

Կ. Պոլսից մեզ գրում են. «Անցած օր թիւրք պաշտօնէութիւնը իմացաւ, որ ուսական, անգլիական և ֆրանսական զեպաններու թարգմանները բանտը պիտի այցելեն Խալոյն գետինը, քարերուն և տախտակներուն վրա խոնուած հայերը կը վերցնեն, աչքի չը զարնող անկնները, սենեակներուն մէջ կը փակեն, 50 մարդու համար եղած սենեակի մէջ 150—200 մարդ լեցնելով, որպէս զի եւրոպացի այցելուները չը կրնան տեսնել անմեղ բանտարկեալներու հոծ բազմութիւնը և անոնց խեղճութիւնը: Այդ օրը գրեթէ մինչև իրիկուն բանտարկեալները այդ սենեակներուն մէջ փակված մնացին, շուկ չը հանելու համար խիստ և սպառնալի հրամաններ ալ ստացած: Այցելուները ժամը 8-ին միջոցները եկան և օտարներու առաջնորդութեամբ պտըտեցան զանազան կողմեր, առանց սղակել կասկած մը ունենալու նրանց գոյութեան մասին: Անոնց երթալէն ետքն ալ զեռ մինչև իրիկուն պահեցին բանտարկեալներուն այդ նեղ ընակարաններուն մէջ: Օղը այն աստիճան սպառնալի էր, որ շատերը մարում էին:»

ԳԼԱԳՍՏՈՒՆԻ ՅՕՒՈՒԱՅՐ

Անգլիական «Nineteenth Century» հանդէսի մէջ Գլադստոն մի յօդուած է տպել, որի մէջ ամփոփում է զանազան հեղինակների (Րոֆէրսի, Լորդ Միտի, Ջոն Բէրնսի և պրոֆէսոր Սլաուէնի) կարծիքները արեւելեան հարցի մասին:

Գլադստոն ցոյց է տալիս, թէ Անգլիան յատուկ պարտաւորութիւններ է յանձն առել Թիւրքիայի վերաբերմամբ: 1878 թիւին նա կընդգեց մի դաշնագիր սուլթանի հետ, որով պարտաւորվել է պաշտպանել օսմանեան կայսրութեան ամբողջ արիական մասը Ռուսաստանի յարձակումների դէմ: Սուլթանը, իր կողմից, պարտաւորվել է բարենորոգել իր կառավարութիւնը Անգլիայի համաձայնութեամբ, այնպէս որ—աւելացնում է Գլադստոն—մենք, իսկ կասկէս պէտք է պատասխանատու համարվենք այն կառավարութեան համար, որ այժմ գոյութիւն ունի օսմանեան պետութեան մէջ և նրա համար, որ սուլթանը չը կատարեց իր խոստումները: Հայերը չը մտցրվեցին այդ դաշնագրի մէջ, նրանք ոչ դաշնագրական իրաւունքներ ունեն, ոչ էլ միջազգային գոյութիւն: Նըրանք միայն մարդիկ են և թէ և նրանք նոյնպէս քրիստոնեաներ են, բայց այդ, այնու ամենայնիւ, չէ փոխում գործի վիճակը: Սակայն ով սիրտ կանի հերքել, որ մենք կընքելով դաշնագիր, և անտես անելով նրանց, չենք վեր առել մեր վրա ոչ միայն ծանր իրաւաբանական պարտաւորութիւններ Թիւրքիայի վերաբերմամբ, այլ նաև իրական բարոյական պարտաւորութիւններ հայերի վերաբերմամբ:

Մենք պարտաւոր ենք պահանջել սուլթանից անմիջապէս իրագործել այն պարտաւորութիւնները, որոնք մտցրված են մեզ հետ կընքած դաշնագրի մէջ և պէտք է այդ պարտաւորութիւնները զանցառութիւնը նկատենք իբրև այդ դաշնագրի եղծում: Մենք ամբողջ աշխարհի առաջ պարտաւոր ենք հոգ տանել, որ Հայաստանը և արիական Թիւրքիան լաւ կառավարութիւն ունենան: Մենք կապել ենք մեզ պարտաւորութիւններով, և զբա համար ստացել ենք այն, ինչ որ այն ժամանակ համարում էինք թանգազին սեփականութիւն մեր պետութեան համար, այն է Կիւրտո կղզու արիապետութիւնը, թէ և այժմ ամվում է, որ Կիւրտո մեզ համար ոչ մի նշանակութիւն չունի, բայց այդ չէ վերաբերում գործին:

Մենք, սակայն, կարող ենք, ցանկանալով ձեռք բերել ուրիշներ գործակցութիւնը, հետեակ վարչապետութիւնը առաջարկել Անգլիան կարող էր իր վրա առնել ամենահանդիսաւոր պարտաւորութիւններ բոլորովին անկախ կերպով, բայց այժմ նա կամենում է իր գործերին մասնակցել չեղած ուրիշ անձանց և պետութիւնների վրա դնել հարցը լուծելու իրաւունքը: արդեօք պարտաւոր է նա, ներկայ զէպքում,

աշխատել իրագործել անպատճառ այդ պարտա-  
ւորութիւնները:

Եթէ այդ վարդապետութիւնը ընդունվի—ս-  
տում է Գլխաւոր իրեր եղրակացութիւն—այն  
ժամանակ ես խոստովանեմ կառավարելէի ջնջել  
մեր լեզուից և մեր բառարաններից «պատիւ»  
անունով հին բառը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՅՈՒՄՈՒՐ

Ռուսաստանի և արեւմտեան Եւրոպայի պետա-  
կան անձեր այժմ սաստիկ զբաղված են թիւր-  
քիայի տնտեսական վիճակով: Հիւզարտոսների  
զեկուցումներից երևում է, որ արդիւնաբերու-  
թիւնը պակասել է, առետուրն ընկել է և պե-  
տական բազմաթիւ կարիքներ մնում են առանց  
բաւարարութեան:

Ռուսաց գործակալութեան ասելով, Կ. Պոլսի  
էլիտական մասնագործը հաշուել է, որ ներկայ  
1896 թ-ի պակասորդը, գեթիցիտը, մէկ միլիոն  
լիւրայից չի բարձրանայ: Սակայն եւրոպական  
գրամատէրերը մեծ անհանգստութեամբ և վեր-  
ջովմուճքով են նայում թիւրքիայի տնտեսական  
ներկայ վիճակի վրա:

«Новое Время» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը  
լուրջ ուշադրութեան է առել այդ հանգամանքը  
և համարում է որովհետեւ անմիջապէս:

Ահա նրա խօսքերը:

«Թիւրքիայի զանաւարները բոլորովին դատարկ-  
վել է: Թիւրքիայի ամբողջ բիւջետը մեծ թիւ-  
չէ ներկայացնում. նա միայն 14 միլիոն լիւրա  
է, կամ հաշուելով մէկ լիւրան այժմեան կուրսով  
8 ր. 60 կոպէկ, ընդամենը 120 միլիոն ռուբլի:  
Բայց և այս համեմատաբար անշնչան գումարից  
ներկայ թվականի մուտքը հազիւ թէ կէսին  
հասնի: Անփութեան պատճառով թիւրքական  
վարչութեան ներկայ կազմակերպութիւնն է և  
այդ միջոցներն ընդունում են թիւրքիայի թէ  
բարեկամները և թէ թշնամիները: Ոչ միայն  
խուզ գաւառներում, այլ և Կ. Պոլսում թիւրքա-  
նպատակը ապահով չէ կարող գործել, եթէ նա  
չէ հովանաւորված օտարահպատակի միջոցով:  
Նա չէ կարող պարագլու ոչ արհեստով, ոչ ա-  
ռետորով, նա ազատ չէ առաջնորդների յարձա-  
կումներից, որովհետեւ այս վերջինները իրանց  
անպատիժ են դարձրել շուրջիւ այն կաշտքնե-  
րի, որ նրանք տալիս են ուժեղներից զրկված  
պաշտօնեաներին:

«Այդ մշտական աղքատութեան պատճառին  
աւելացաւ և նորը: Փոքր-Ստիան մինչև այժմ  
թիւրքիայում մի հաւ էր, որ սակէ ձուեր  
էր անում մուսուլմանների համար: Հայերը սեր-  
մանում էին, իսկ նրանց հունձները ուտում էին  
թիւրքերը և լաղերը: Հայերը առուտուր էին ա-  
նում, իսկ նրանց վաստակը վերցնում էր թիւր-  
քաց վարչութիւնը: Բայց ահա, այս վերջին եր-  
կու տարվայ դէպքերից յետոյ՝ հայերը սկսեցին  
բիւջ սերմանել և քիչ պարագլու վաճառակա-  
նութեամբ Գուրզը և լաղը այժմ քաղցած են  
մնացել, թիւրքաց գաւառական վարչութիւնը  
չէ կարողանում կուշտ սպրել:

«Մայրաքաղաքի թիւրք պաշտօնեաները վեր-  
ջին վեց ամսվայ ընթացքում ստացել են մի-  
այն մի ամսվայ ուժեղ: Թիւրք օֆիցերները  
վերջին ամսվայ համար ստացել են ուժեղ 1 ր.  
80 կոպէկ իւրաքանչիւրը: Մայրաքաղաքի զին-  
ւորները ստացել են իրանց սովորական բաժնի  
կէսը»:

ԿԻՏԵՆ ԵՆ ԱՆԳԱՒՈՒ

Հեռագիրը մի քանի օր առաջ հաղորդեց, թէ  
կրետացիները մի երախտագիտական ուղերձ են  
մատուցել անգլիական փոխ-ծովային Մէյմու-  
րին, որի մէջ իրանց շնորհակալութիւնն են  
այցանում Անգլիային այն եռանդուն անկողնու-  
թեան համար, որ նա ցոյց տուեց կրետացիներ-  
ին: Այդ ուղերձը, ուղղված միայն Անգլիային,  
կարող է մի քիչ զարմանք պատճառել, որովհե-  
տեւ, ինչպէս յայտնի է, կրետական հարցը աջող  
կերպով լուծվեց բոլոր մեծ պետութիւնների  
օգնութեամբ, սակայն,—ասում է «Новости»  
լրագիրը—անկարելի է հերքել, որ Անգլիան  
կրետական հարցում առանձին կերպով աչքի  
բերկնող և արդիւնաւոր մի դեր կատարեց, և  
այդ պատճառով կրետացիների երախտագիտա-  
կան ուղերձը անգլիացիներին, միանգամայն օ-  
րինաւոր պէտք է նկատել: Աթէնքի կրետական

կամիաւոր կրետի անունով շնորհակալութիւն է  
այցանում ամբողջ Անգլիային, որ նա վերջին  
70 տարվայ ընթացքում օգնել է յունական գոր-  
ծին և յոյս է արտայայտում, որ դեռ թիւրքա-  
կան լուծի տակ գտնվող միւս յոյներն էլ կա-  
ղատվեն այդ լծից: Անգլիայի անկողնութեամբ:

Այդ վերջին կէտում, նկատում է ուսու լրա-  
գիրը, յոյները բաւական չեղում են ճշմարտու-  
թիւնից: Յոյների ազատութիւնը կատարվեց  
երեւանական թակահարների սկզբում, Անգլիայի  
ցանկութեան հակառակ: Բայց ճշմարտուն այն է,  
որ Անգլիայի նախկին քաղաքականութեան այլ  
և չէ համապատասխանում այժմեան քաղաքա-  
կանութիւնը: Գամանակակից Անգլիայի հաս-  
րակական կարծիքը անհամեմատ աւելի ուժեղ  
է, քան 60 տարի առաջ: Կրետական խնդրում  
լուրջ Սօյսիւրին թէ էր ստանում հասարակա-  
կան կարծիքի արտաբերութիւնից և այժմ, երբ  
կրետական հարցը լուծվել է յոյների օգտին, կա-  
րելի է տեսլ, որ Անգլիան առաջին տեղն էր  
զբիւ յոյների ազգայնական շահերը:

Կրետական հարցի մէջ Անգլիայի մասնակցու-  
թեան պատմութիւնը որոշ ազդեցութիւն ունե-  
ցաւ,—արունակում է իր նկատողութիւնները  
ուսու լրագիրը—և հայոց հարցի ընթացքի վրա:  
Անգլիացիները այժմ են միայն հակակցել, որ  
Անգլիան 1878 թ-ին խոչը սխալ գործեց, սլն-  
դելով որ ս. Ստեփանօսի դաշնագրի տեղ գրվի  
Բէրլինի դաշնագիրը: Գլխաւորում ուղղակի ասում  
է իր մի յօդուածի մէջ, որ հայերի այժմեան  
կտորածը տեղի չէր ունենայ, եթէ ս. Ստեփա-  
նօսի դաշնագիրը չը ջնջվէր: Այդ սխալը խոս-  
տովանում են անգլիացիները, բայց իբրև բարե-  
խիղճ մարդիկ, աշխատում են ուղղել իրանց  
սխալը և դրա համար արժանի են յարգանքի:

ՆԱՄԱԿ ՊԱՐՏՈՒՄԱՆԵՐԻՑ

Մ է շ է դ, օգոստոսի 30-ին  
Մէշէղի ժողովուրդը ատելով ստում է քրիս-  
տոնեայ տարրին և աչք է գոցում հային չը  
տեսնելու համար. այդ պատճառով հայ վաճա-  
ռականների կեանքը անհաւանանքի դրութեան  
մէջ է այստեղ: Նրանցից մէկը կամ միւսը, ա-  
ռանձնացած իր խանութում, անձնատուր է իր  
առևտրական գործերին և բոլորովին զուրկ է  
որ և է զուարճութիւնից: Հայկական ամենաշա-  
նաւոր տօներն անգամ անցնում են առանց որ  
և է տպակտրութիւն թողնելու: Տարվայ չորս ե-  
զանակները օչինչ նորութիւն չեն բերում Մէշէ-  
ղում ընակվող հայերին, նրանց կեանքը մեռե-  
լային դրութիւն ունի: Քաղաքի մեծ մասը, ուր  
կենտրոնացած են բոլոր նշանաւոր առևտրա-  
կանները, և որը քաղաքի ամենամաքուր տեղն  
է, արեւելված է քրիստոնեաների համար, այն  
պատճառով, որ այդ չրքախալի մէջ է գտնվում  
մահմէտականների ուխտատեղին—Լամա՛ իրգայի  
չիրիւմը, որի վրա կառուցված է ճարտարաչէն  
մղկիթը՝ բարձր ոսկեզօծ գմբէթներով և մինա-  
րէններով:

Մէշէղի ժողովուրդը, մանաւանդ հոգեւոր  
զատը, խորթ աչքով է նայում հայերի վրա,  
և եթէ հար լինէր, նա բոլորովին կը կտրէր իր  
յարաբերութիւնները հայերի հետ, բայց չահա-  
սիրութիւնն արգելում է նրանց կտր բանն անե-  
լու, և նա ախապա չարտակում է իր կեղծ  
բարեկամութիւնը: Կրօնամուտութիւնը և մտտիա-  
պաշտութիւնը այն աստիճան զարգացած են  
Մէշէղի և առհասարակ Սորասանի ժողովրդի  
մէջ, որ չատերը մեղք են համարում հայի խա-  
նութ մանկիս ոտներից հանել ցեխտո կօշիկ-  
ները, այլ ուղղակի կօշիկներով մանում են,  
անխնայ կերպով կոխտուելով յատակի վրա տա-  
րածած գորգերը: Նրանց կարծիքով քրիստոնեան  
չիրութեան վերին յարկում ընակարան ունե-  
նալու իրաւունք չունի, և մեղք է մուսուլ-  
մանին սպրել այնպիսի շինութեան ներքին  
յարկում, որի վերին յարկում սպրում է քրիս-  
տոնեան: Եւ ինչպէս կարելի է, որ իւրամի կեր-  
րում քրիստոնեան ձի հեծնէ, կամ որ և է զուար-  
ձութիւն ունենայ: Մի խօսքով, Սորասանի ուղ-  
ղախառ մուսուլմանների կարծիքով, աշխարհի  
բոլոր վայելչութիւնները իրանց են վերադաճ-  
ված: Անխնայութիւնը այս ժողովրդի մէջ զէպի  
որ և է օտար տարր այն աստիճանի է, որ իրա-  
ւունք է տալիս սրանց ուղղակի բարբարոս ա-  
նուանել: Օրինակ, պատահում է մի մուսուլմա-  
նի և մի այլադաւանի մէջ վեճ, որը հասնում է

կուրի, այդպիսի դէպքում ամեն պատահող պար-  
տիկ վաղում է օգնել իր համադաւանին, առանց  
տեղեկութիւն ունենալու գործի էութիւնից, և  
անխնայ ձեռնում է հակառակորդին, եթէ  
մինչև անգամ արդարութիւնը նրա կողմն է, և  
եթէ հարկը մարդ թափվեն մի մարդու ոտնա-  
կոխ անելու, մեծ վաճառակամները անտարբեր  
կերպով կը նայեն. բաւական չէ, որ միջամտու-  
թիւն չեն անի կուրը խաղաղացնելու, դեռ  
զաղտնի կերպով էլ կը սովորեցնեն մահամեծ  
անել այլադաւանին: Մարդասիրական զգացմուն-  
քը գոյութիւն չունի այստեղ: Կրա տպացոյց  
վերջերս Սորասանի թուրքաթ ջաղաքում տեղի  
ունեցած դէպքը:

Ընթերցողը կարող է երեւակայել, թէ ինչ կը  
լինի այսպիսի ֆանատիկոս ժողովրդի մէջ սպրող  
հայի դրութիւնը: Մի բան, որ Սորասանի նաճան-  
գում սպրող հայերի կեանքը ապահով դրութեան  
մէջ է դնում, այդ ուսուց կառավարութեան ազ-  
դեցութիւնն է, որ մեծ երկիւղ է աղբում պար-  
տիկների վրա, սակայն այդ ազդեցութիւնն էլ  
տարեց տարի հասարակ ձե է ստանում, շուր-  
հիւ զանազան հանգամանքներով...

Մէշէղում սպրող հայ երիտասարդները ներ-  
կայացնում են բոլորովին անմիջապէս դուր-  
թիւն. նրանք բոլորովին օտարացած են հայկա-  
կան սովորութիւնից, դուրկ են լրագրից, ըն-  
թերցանութիւնն չը կայ, պահանջ էլ չեն զգում,  
ընդհանրապէս անտարբեր են զէպի բոլոր այն  
հարցերը, որոնք դուրս են իրանց առևտրական  
չրքանից. որ և է առաջարկութեան՝ լրագրի ըս-  
տանաւու, ընթերցանութեամբ պարագլուելու,  
հասարակական որ և է հարցով հետաքրքր-  
վելու, ծաղրով են վերաբերվում և սովոր  
են միշտ ասել. «վաճառականին ինչ կը սաղի  
այդպիսի բաներ, մենք եկել ենք այստեղ փող  
աշխատելու»: Փող աշխատել,—այդ է բոլորի  
հայեցակէտը, և այդ նպատակով նրանք պատ-  
րաստ են ամեն միջոցների դիմելու, առանց  
խտրութիւն դնելու ազնիւ և անազնիւ գործերի  
մէջ: Ընկերակրութիւն չը կայ այդ հայերի մէջ,  
ընդհանրակալին, նրանք պարտաս են միմեանց  
վարկը վար գրել ժողովրդի առաջ: Մէշէղի աշ-  
րութիւնը միւսի համար ցաւ է, մէկը պարտաս  
է միւսին տապալելու համար դիմել անազնիւ  
միջոցներին: Մանաւանդ սաստիկ զարգացած է  
բաւբաւանքը:

Յանկալի էր, որ այդ երիտասարդութիւնը ըզ-  
գար իր բարոյական պարտականութիւնը և աչ-  
խատէր իրան փոքր ի շատե՛ ուղղելու միջոցներ  
որոնք: Յանկալի էր, որ նրանց ուղործած էլա-  
ղէկները՝ գոնէ խղճային իրանց անձուէր  
գործակատարներին, այն գործակատարներին,  
որոնք կեանքի այդպիսի պայմանների մէջ սպ-  
րելով, ուրիշ ձգտում չունեն, բայց միայն «խա-  
ղէկները» չահերը պաշտպանելու: Գանէ «խա-  
ղէկները» իրանց առևտրական աներում լրա-  
գիրներ ստանային, որպէս զի իրանց գործակա-  
տարները միջոց ունենային լրագրի օգնու-  
թեամբ մտաւոր զարգացում ստանալու:

Մ. Մ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսից հեռագրում են, որ Յամանեան  
բանկի բոլոր ծառայողները պարզէ ստացան  
ոսկէ ժամացոյցներ ի յիշատակ 1896 թ-ի օ-  
գոստոսի 26-ի՝ փորագրութեամբ:

—Աթէնքից հեռագրում են, սեպտեմբերի  
19-ից, որ Մակեդոնիայի ապստամբների յայտնի  
պարագլուս Բրուֆաս ջարդեց թիւրքաց զօրե-  
րը: Շատ թիւրքեր են սպանված: Մէկ կապի-  
տան 30 նիզամների հետ գերի են ընկած:  
—Ընդօժնից հեռագրում են, որ Լճոյնի նոր  
լուրջ-միջ միաձայն ընտրված է Պօղէ՛ Ֆիլիպս:  
Վերջինս հրէայ է և «Daily Telegraph» լրագրի  
սեփականատէր Լաուսոնի փեսան է: Ֆիլիպսի  
հայրը, Բէնիամին Ֆիլիպս, լուրջ-միջ էր 1866  
թ-ին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սուվօրինի և ընկ. հայերեստիական տեղե-  
րին և օտարակերութեան անորժակին մասնա-  
կից է ինչպէս յայտնի է, նաև «Южный Край»  
լրագիրը, որ հրատարակվում է խաղիվում: Ա-  
հա մի փաստ, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս են  
այդ մարդիկ ձեռք բերում իրանց «հրեկի  
փաստերը»: «Южный Край» լրագիրը սեպտեմ-

բերի 20-ին տպել է հետեւալը. «Էջմիածնից  
մեզ գրում են, որ սեպտեմբերի 14-ին այնտեղ  
կատարվեց մեծ օրհնութեան ձեռք, որ հայ-  
լուսաւորչականների մօտ տեղի է ունենում 25  
տարին մի անգամ: Մեծ օրհնութեան ձեռք  
կատարեց ինքը կաթողիկոսը եպիսկոպոսների  
հետ, որոնք եկել են այն բոլոր պետութիւննե-  
րից, ուր սպրում են հայեր: Եկան հայերի  
պատգամաւորներ Պետերբուրգից և հարաւային  
Ռուսաստանի (Բեսարաբիայի) թեմից: Ի նկատի  
ունենալով հայոց հարցի ներկայ սուր դրութիւ-  
նը, հայ ներկայացուցիչների ժողովը Էջմիած-  
նում քաղաքական մեծ հետաքրքրութիւն է ներ-  
կայացնում»:

Օ՛, անմահ Գրեգորէ՛ս, կարող էիր երեւակա-  
յել թէ քո գրաւը մի ժամանակ մարդկային  
անամօթութեան հրապարակական գործիք է  
դառնալու...

\*\*\*

Ի դիտութիւն ի խտի օլ օգն երի: Ձի-  
վանչիբ գաւառի մի գիւղում, որ գտնվում է  
Թարթառ գետի վրա, յայտնի է ձկան մի տե-  
սակ, որ կոչվում է «գործակալ»: Այդ անունը  
առաջացել է այն հանամանքից, որ տեղական  
գործակալ քահանան երբէք չէ կարող առանց  
այդ ձկան երեւոյ Ղարաբաղի կոնստապոլիայի  
չեմբուս: Գիւղացին սպում է. «Թո՛ղը քաղցի,  
երկու գործակալ դուրս եկաւ»: Գիտական ձրկ-  
նաբանները անշուշտ երախտագրութեամբ  
կարծանազորին կոնստապոլիայի այս անունը ըզ-  
բաղմունքը, որ ընծաներէ՛ս ստանայն է: Եւ ի-  
բաւ, եթէ չը լինէր այդ, Թարթառի ձկները  
ինչպէս կը ստանային անունը: Մնում է որ նկա-  
րագրին այդ ձկան յատկութիւնները, և այն  
ժամանակ գիտական աշխարհը անտեղեակ չէր  
մնայ Ղարաբաղի կոնստապոլիայի անորժակի  
մասին:

\*\*\*

Պարագլիտն եր Լայոց մամուլի անբարոյա-  
կանութեան մի նոր փաստ: Ամիսներ ընթաց-  
քում մենք նկատում ենք թէ ինչպէս պարբերա-  
կան մամուլի օրգաններից մի քանիք վերց-  
նում են «Մշակի» հարցազօծ լուրերը, արտա-  
տուում են նայն իսկ զօրեւանները, քաղութիւն  
չունենալով յիշատակել թէ դրանք իրանց սեփա-  
կանութիւնը չեն: Այդ կողմից, ինչպէս և ամեն  
մի գործի մէջ, որ պարագլիտային մամուլին է  
յատուկ, արտիստական կատարելագործութեան  
հասել է, ի հարկէ, «Արձագանքը»: Նա արտա-  
տուում է «Մշակից» պաշտօնական զեկուցա-  
գրերը, չիմանալով որ մենք կրճատում ենք ենք  
ենթարկում մեր ձեռքը հասած զօրեւանները:  
Այսպէս, «Մշակի» № 107-ի մէջ տպված այն  
ուղերձը, որ մատուցել է Բարթոլոմէոս սուլ-  
թանի գահակալութեան օրը, «Արեւելում» տրչ-  
ված է թուրքերէն, և մենք ինքներս թարգմա-  
նել տուինք մեր խմբագրատանը: Իսկ «Արձա-  
գանքը» բառ առ բառ արտատուել է մեր թարգ-  
մանութիւնը: Նոյնպիսի արհեստով լուիկ մնիլիկ  
զբաղված է և «Մուրճ» ամսագիրը: Շատերից  
չիչենք մի երկուսը: Յովիւս-օգոստոսի համարում  
(եր. 1020—1021) մենք տեսաւք «Մշակի» 84  
համարից բառ առ բառ արտատուած մեր մի  
թարգմանութիւնը «Daily News» լրագրից, որին  
մենք տուել էինք «Արձագանք» թարգմանքը վեր-  
նագիրը և որի մէջ բազմաթիւ կրճատումներ  
էինք արել: Իչ չենք խօսում ուրիշ մանր մունր  
տեղեկութիւններ մասին, որ վերցնում է Ա-  
րախանանանց մեր լրագրից և զբաղարում իր  
ստորագրութեամբ: Ամսագրի նոյն համարը «Չա-  
նազան լուրերի» բաժնում Արախանանան համա-  
ուսուելով զրեւ է մեր մի թղթակցութիւնը, որ  
նկարագրում էր այն պատգամաւորութիւնը,  
որ ներկայացաւ պարսից Շահին:

Եւ այն, և այն, և այն:  
Հարցնում ենք մեր պարագլիտներին, ո՞ր է,  
պարոններ, ձեր ամթը...

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱԹՈՒՄ. Ա. Շառ. Չեր գրած հասցեով «Մը-  
չակ» ուղարկված է: Տեղեկացէք այդտեղի պոս-  
տում:

ՕՁՈՒԳԻԹ, Յ. Չանուբեան. Պատճառն այն չէ,  
որ դուք յիշում էք, այլ այն, որ ձեր նամակի մէջ  
մտացել էիք գրել թէ քաղաքում պիտի ստա-  
նաք լրագիրը: Ուստի համարները մենք պահեցինք  
խմբագրատանը մինչև ձեզանից նոր տեղեկու-  
թիւն ստանալը: Այժմ ուղարկեցինք:

ԲԻՇՆԵՎ. Հ. Համարձու մանց: Տարեկան  
բաժանորդագրութիւն ընդունվում է յունվարի  
1-ից: Անցեալ տարի ձեր ուղարկած 10 ռուբ-  
լուց երեք ռուբլի հանել ենք իբրև բաժանորդա-  
գին հոկտեմբերի մէկից մինչև յունվարի 1-ը:  
Մնացած 7 ռուբլով ուղարկել ենք «Մշակ» մի-  
չև ներկայ տարվայ օգոստոսի մէկը:—Այժմ ու-  
ղարկեցինք ձեզ սեպտեմբերի մէկից, բարեա-  
ձեցեք հասցեն բաժանորդագիրը մինչև տարվայ  
վերջը և այնուհետեւ նկատի առնել, որ տարե-  
կան բաժանորդագրութիւն մենք ընդունում ենք  
միայն յունվարի մէկից:

ԲԱԹՈՒՄ. Ս. Բաբայան. «Մշակ» կուրա-  
րինք ձեզ հոկտեմբերի մէկից:

ԱՍԱՒՔԱՒԱԿ: \*\*\* Չեր յօդուածը Ղարաբաղի  
կոնստապոլիայի հերթում զեմ չի տպվի: Չարժէ  
հանրածանօթ բաների մասին գրել:

ԱՍՍԱԲԱԳ. Գ. Խալ. կարողացէք վերել պատա-  
խանը:



